Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

[redacted]

ՀՐԱՀԱՆԳ

ՍՊԱՌՆԱՑՎՈՂ ԳՈՏՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻՆ ՀԱԿԱՌԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

623.459
Հ 94

ԵԵՐԵՎԱՆ 1986

13.350

623.459
Z-94

04 AUG 2010

Հաստատված է ՀՍԽՀ-ի
ԺԿՆ-ի կողմից 15|II. 35 թ.

ՀՐԱՀԱՆԳ

ՍՊԱՌՆԱՑՎՈՂ ԳՈՏՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻՆ ՀԱԿԱՌՈՂԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՏԱՐԲԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ, ԲԱՆՖԱԿՆԵՐԻ, ԲՏՈՒՀ-ՆԵՐԻՑԵՎ ԲՈՒՀ-ԵՐԻ ՀԱՄԱՐ։

I. ՀԱՏՎԱԾ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Դպրոցական հաստատություններում հակառողային պաշտպանության խնդիրները հանդիսանում են՝

ա) մասսայական աշխատանքն ուսանողության (աշակերտության) մեջ հակառողային պաշտպանության խնդիրների շուրջը, նրանց կազմակերպելն և նախապատրաստելը հակառողային պաշտպանության պայմաններում աշխատելու համար.

բ) մանկավարժական ու վարչատնտեսական կազմի կազմակերպելն ու նախապատրաստելը հակառողային պաշտպանության պայմաններում աշխատելու համար.

գ) մի շարք միջոցառումների ձեռնարկումն ուսումնական հաստատության սովորողներին և գույքը պաշտպանելու համար.

2. Ուսումնական հաստատության հակառողային պաշտպանության (ՀՈՊ) բոլոր ձեռնարկումների պա-

138
3955
20417-59

17 JUN 2013

տասխանատուն հանդիսանում է նրա դիրեկտորը, վորը հանդիսանում է տվյալ հաստատության ՀՈՊ-ի պետը և անձնապես պատասխանատու յե Լուսժողկոմատի Բ.Գ. և Կ.Բ. պատգամավորների տեղական խորհրդի, գործկոմի առաջ, ՀՈՊ-ի համար իրեն ուսումնական հաստատության նախապատրաստվելուն և ՀՈՊ-ին պատրաստ լինելուն:

Ծանոթություն 1.— Դիրեկտորի բացակայության ժամանակ ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետի պարտականությունները կատարում է նրա տեղակալը կամ ուսմասվարը:

2. Լուսժողկոմատի սիստեմում (ցանցում) չգտնվող ուսումնական հաստատություններում տարվելիք ՀՈՊ-ի աշխատանքների համար դիրեկտորը պատասխանատու յե համապատասխան ժողկոմատի և տեղական խորհրդի կամ գործկոմի առաջ:

3. Ուսումնական հաստատության հակատդային պաշտպանության միջոցառումների համար նյութական և ֆինանսական միջոցները հատկացնում են ժողովրդական լուսավորության որգանները համապատասխան բյուջեյով:

4. Հասարակական կազմակերպություններին—Պաջը-Ավիոքիմի, Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի ընկերություններին, ժողովրդական լուսավորության որգանները, մասնակից են դարձնում ուսումնական հաստատությունների ՀՈՊ-ի աշխատանքների այն բնագավառներին, վորոնք վերաբերվում են հիշյալ հասարակական կազմակերպություններին:

5. Պաջը-Ավիոքիմի աշխատանքների մեջ են մտնում

ա) ուսանողության (աշակերտության), մանկավարժական և վարչատնտեսական կազմի հակատդային և հակաքիմիական պաշտպանության անդրադիտության վերացումը, (ՀՈՔՊ-ի նորմաները).

բ) ուսանողության (աշակերտության) և դասատուական կազմի մեջ հակատդեր տարածելը (նրանց հաշ-

վին), հակատդերի վերանորոգման աշխատանքների կազմակերպումը և նրանց պահպանման ստուգումը.

գ) ուսումնական հաստատության Պաջը-Ավիոքիմի բջիջի բազայի վրա դիրեկտորի հետ միասին ՀՈՊ-ի կամանդաների և ջոկատների կազմակերպումը.

դ) ՀՈՊ-ի կամանդամների և ջոկատների անձնական կազմի (մասնագիտական) պատրաստումը.

յե) ուսումնական հաստատությանը քիմիական գույքով մատակարարելու գործի կազմակերպումն ըստ պայմանագրի և ի հաշիվ հաստատության.

զ) հակատդային և հակաքիմիական պաշտպանության մասսայական գրականության՝ դասագրքերի, ցուցադրական միջոցների հրատարակումը, շարժական ցուցահանդեսների, դասախոսությունների, հակատդային և հակաքիմիական պաշտպանության անկյունների կազմակերպումը:

6. Ուսումնական հաստատություններում Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի ընկերությունների պարտականություններն են՝

ա) մասսայական սանիտարական միջոցառումների անցկացումը.

բ) ինքնատդնության և փոխադարձ ոգնության (բժշկասանիտարական) համար ուսանողական (աշակերտական) և դասատուական կազմի պատրաստելը (ՊԱՍՊ-ի նորմաները).

գ) բժշկասանիտարական ստորաբաժանումների մարտական պատրաստականությունը (ՀՈՊ-ի սանիտարական պոստեր, սանիտարական ջոկեր, կամանդաներ և ջոկատներ):

Ծանոթություն.— ուսումնական հաստատություններում, հասարակական կազմակերպությունների աշխատանքները պետք է ընթանան դիրեկտորի ղեկավարությամբ և տեղի կուսակցական, ԼԿՅԵՄ, պրոֆկազմակերպությունների ու զինակոչին աջակցող հանձնաժողովի (յեթե կա այդպիսին) ակտիվ մասնակցությամբ:

2-ՐԴ ՀԱՏՎԱԾ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆԸ (ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆԸ) ՅԵՎ ԳՈՒՅՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Ա. ԹՈՒՆԱՎՈՐՈՂ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՅԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ՁԵՎՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԵԼԸ

7. Բոլոր ուսանողները (աշակերտները) պետք է ծանոթ լինեն հակագազին և կարողանան ոգտվել նրանից: Այդ նպատակների համար յուրաքանչյուր ուսումնական հաստատություն պետք է ունենա 25—30 հատ վարժական հակագազ: Ուսանողների մեջ (աշակերտների) Պաչը-Ավիոքիմի կողմից տարվող մասսայական աշխատանքների կարգով պետք է տարածել քաղաքացիական նմուշի հակագազեր ուսանողների հաշվին:

Տարրական դպրոցի աշակերտները սովորում են և գործածում իրենց հասակի համապատասխան թեթևացրած ձևի հակագազեր:

8. Ուսանողությանը (աշակերտությանը) դասարաններում տեղավորելիս պետք է խստորեն հետևել դոյություն ունեցող նորմաներին, վորպեսզի ավելորդ կուտակվածություն չստեղծվի: Դասարանները (սենյակները) պետք է ունենան պահեստային յելք, վորպեսզի հարկ յեղած դեպքում ուսանողությունը (աշակերտությունը) կարողանա արագ կերպով հեռանալ:

9. Ողային հարձակումների ժամանակ դասարանները (ուսումնական շենքերը) թունավորող նյութերի ներհոսելուց պաշտպանելու նպատակով պետք է նախատեսնել հակաքիմիական պաշտպանության հասարակ և ոժանդակ միջոցներ— կահավորել այսպես կոչված պաշտպանող սենյակներ (դասարաններ), դասարանների ողը մաքրելու նպատակով պետք է ողափոխիչները (վենտիլյատորները) մշտապես լինեն կանոնավոր վիճակում:

10. Թունավորող նյութերից պաշտպանվելու նպատակով յուրաքանչյուր դպրոցական հաստատության կամ խմբերի համար կառուցվում են ապաստարաններ, այն հաշվով, վորպեսզի հնարավորություն լինի այնտեղ տեղավորել սովորողների մեկ հերթն ամբողջապես 4-ից մինչև 6 ժամով: Նման ապաստարանների համար հատկացվում են ներքհարկային կամ կիսաներքհարկային շենքերից, համապատասխան ձևով կահավորված: Ապաստարանների կահավորումը հատկապես պետք է նկատի ունենալ նոր դպրոցական շենքեր կառուցելիս:

Ծանոթություն.— Տարրական դպրոցների աշակերտները պաշտպանող սենյակներում (դասարաններում) և ապաստարաններում յեղած ժամանակ մանկավարժական կազմը լինում է նրանց հետ ապահովելով կարգապահությունը և քաղ. մասսայական աշխատանքն աշակերտների մեջ:

Բ. ԿԱՐԳ ՊԱՀՊԱՆԵԼԸ

11. Ողային հարձակումների ժամանակ ուսումնական հաստատության բոլոր դռները փակվում են և պահպանվում են այն անձանց միջոցով, վորոնց հանձնարարված է շենքի պահպանումը խաղաղ ժամանակ: Կարգ պահպանելու համար նշանակվում է լրացուցիչ պահակակետեր վարչատնտեսական կազմից և ուսանողներից, դուրքի պահպանման և խուճապի դեմ պայքարելու համար: Հատկապես պետք է նախատեսնել այն շենքերի պահպանումը, վորտեղ գտնվում է թանգարժեք գույք, լաբորատորիաներ, վարժական և գիտական կաբինետներ, գրադարաններ, թանգարաններ, ցուցահանդեսներ և այլն: Ելեկտրական գործիքները տոկից անջատվում են: Շենքը տաքացնող գազային ցանցը ևս դադարեցվում է գործելուց:

Գ. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

12. Խաղաղ ժամանակ ուսումնական հաստատություններում յեղած հակահրդեհային բոլոր միջոցառումները պետք է լինեն կանոնավոր վիճակում և վոր-

տեղ անհրաժեշտ է ուժեղացվում է (յեթե կան լաբորատորիաներ, վորտեղ գտնվում են պայթուցիկ և վառվող նյութեր, կամ դրադարաններ և այլն)։ Ջեղնահարկի (չարդախ) շենքերը պետք է ազատել հեշտ բոցավառվող առարկաներից։

13. Հրդեհի դեմ պայքարելու համար պետք է ոգտագործել առաջին հերթին տեղերում ձեռքի տակ յեղած միջոցները (ավազ, ջուր, բահեր, կացիններ, յերկաթյա ձողեր, քլունգներ, տակառներ, և այլն) և տեղական տնտեսական հնարավորությունները։

Դ. ԲԺՇԿԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

14. Ուսումնական հաստատության մեջ յեղած կահավորումները—բուժարանները, ջրցանները հարմարեցվում են թունավոր նյութերով վարակվածներին լվանալու (վողողելու) համար։ Բացի այդ նույն նպատակների համար ուսումնական հաստատությունը պետք է ձեռք բերի «Ֆիտան» սիստեմի յեռարաններ և առանձին հարմարանքներ այդ յեռարանների համար, վորպեսզի հնարավոր լինի կազմակերպել թունավոր նյութերով վարակվածների լվացումը (վողողելը)։ Ցանկալի յե, վորպեսզի նույն նպատակի համար հարմարեցվի ուսումնական հաստատության ջերմային սիստեմը, վորի համար պետք է հարմարեցնել կաթսարանները։

15. Ճաշարանը, խոհանոցը, սննդամթերքների մառանը (սննդամթերքները) պետք է թունավորող նյութերից պաշտպանելու միջոցներ ունենալ՝ նման շենքերը պաշտպանել թունավորող նյութերի ներհոսելուց ձեռքի տակ յեղած հակաքիմիական պաշտպանության միջոցներով, ոգտագործել թունավորող նյութերի համար անթափանցիկ փաթթոցներ։ Սննդամթերքները և խմելու ջուրը թունավորող նյութերով վարակված լինելու կասկածների դեպքում, ոգտագործել թույլատրվում է սանիտարական հսկողության յեզրակացությունից հետո։

16. Ուսումնական հաստատության մեջ գտնվող բժշկական կաբինետները պետք է պատրաստ լինեն բուժոգնություն ցույց տալու ոդային հարձակման պայմաններում և ապահովված լինեն շտապ ոգնության հատուկ դեղարկղով։

17. ՀՈՊ-ի պետը և նրա ոգնականները պետք է գիտենան ՀՈՊ-ի բժշկասանիտարական ծառայության մոտակա կայանը, պունկտի, թաղամասային և շրջանային բուժակետերի հասցեները և հեռախոսի համարները ոգնություն պահանջելու համար, յեթե կան մեծ քանակությամբ վնասվածներ և ուսումնական հաստատության ՀՈՊ-ի կամանդայի սանիտարական ոգակների ուժերը և միջոցները չեն բավականացնում։ Պետք է գիտենալ նույնպես մոտակա բուժ.ոգնության հիվանդանոցի և լվացող (վողողող) կետի հասցեները և հեռախոսային համարները վնասվածներին ուղարկելու նպատակով։

Ցե. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ

(Գյուղատնտեսական ուսումնական հաստատությունների համար).

18. Գյուղատնտեսական ուսումնական հաստատությունները, վորտեղ կան կենդանիներ, ձեռք են առնում մի շարք միջոցներ պաշտպանելու համար այն շենքերը, վորտեղ գտնվում են անասունները՝

Պետք է այդ շենքերը (գոմերը) լինեն ընդարձակ և ունենան պահեստի յելք այն դեպքերի համար, յերբ կարիք կլինի հեռացնել այնտեղից անասուններին։

Շենքի դռները և պատուհանի շրջանակները պետք է հագցված լինեն ընդհուպ, պետք է զցվեն ապակիներ, պատերը, առաստաղը և հատակն անցքեր չպետք է ունենան, ոդամաքրիչը պետք է լինի կանոնավոր վիճակում։

Ջրելատեղերը թունավորող նյութերից պաշտպանելու համար ջրհորները, տաշտերը, փորված կոճղերը

(վորտեղից անասունները չուր են խմում) վերևից պետք է ծածկել (նավեռներ)։

19· Աշխատող ձիերը, մասնավորապես այն ձիերը, վորոնք պետք է ոգտագործվեն ոդային հարձակման հետևանքները լիկվիդացիայի յենթարկելու համար, պետք է ունենան ձիու հակագազ։

Ծանոթություն.— Այդպիսի հակագազերը չլինելու դեպքում պետք է ձեռնարկել ժամանակ միջոցներ, այն է՝ չոր կամ կանաչ խոտ, խոտի մանրունք, դնել կտորից պատրաստված յերկու տոպրակների միջև և կապել ձիու աչքերին թունավորող նյութերից պաշտպանելու համար, կամ ոգտագործել բրեզենտ, պարկեր և խիլներ։

Զիասարքը և ձին խնամելու առարկաները թունավորող նյութերով վարակված լինելու դեպքում պետք է անմիջապես հանել գործածությունից և յենթարկել գազահանման

20· Անասունների կերը (ինչպես հատիկային, նույնպես և ծավալ ունեցող) պետք է պահվի ծածկված շենքերում, ծայրահեղ դեպքում ծածկի (նավեռների) տակ։ Անասունների կերը կամ աննդի համար գործածվող մթերքները (հատիկներ, բանջարեղեն և այլն) թունավոր նյութերով վարակված լինելու կասկածների դեպքում, ոգտագործել թույլատրվում է միմիայն բժշկական հսկողության յեզրակացությունից հետո։

21· Ոդային հարձակման հետևանքով մնասված անասուններին անասնաբուժական ոգնություն ցույց տալու համար գյուղատնտեսական ուսումնական հաստատությանը կից կազմակերպվում է անասնաբուժական կայան կամ տվյալ ուսումնական հաստատությունը կցվում է ՀՈՊ-ի անասնաբուժական ծառայության մոտակա բուժոգնության կետին։

Զ· ԼՈՒՅՍԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ

22· Այն ուսումնական հաստատությունները, վորտեղ ընդհանուր լույսի քողարկման (խավարման) պայմաններում, անհրաժեշտ է աշխատել և լուսավորության անհրաժեշտություն կզգացվի, կարող են լույս ունենալ միմիայն ՀՈՊ-ի պունկտի պետի թույլտվությամբ, վերջինիս կողմից այդ ուսումնական հաստատության լույսի քողարկման դրությունն ստուգելուց հետո։

Ծանոթություն.— Լույսի քողարկման վերաբերյալ գործիքի, քաղխորհրդի և ՀՈՊ-ի պունկտի պետի վորոշումների (հրամանների) կատարման ստուգումը դրվում է բանվորա-գյուղացիական միլիցիայի և գերտեսչության պահակային որգանների վրա։

23· Ուսումնական հաստատություններում լույսի քողարկման տեխնիկական և կազմակերպչական ձեռնարկումների կիրառման համար պետք է առանձնացնել հատուկ անձանց, վորոնք պատասխանատու յեն լույսի անջատման, խավարման և քողարկման համար կիրառվող բոլոր միջոցառումների ժամանակին գործադրվելուն։ Յուրաքանչյուր ուսումնական հաստատության մեջ պետք է ապահովված լինի լուսավորության կենտրոնացած կարգով անջատելը (ամբողջ շենքի համար), վորի համար յուրաքանչյուր մուտքի մոտ ունենալ ընդհանուր հատիչ (ռուբիլնիկ)։

24· Այն ուսումնական հաստատությունները, վորոնք ոգտվում են անջատվող (կենտրոնացված) լույսից և ըստ ՀՈՊ-ի պլանի լուսավորության կարիք են զգում (յելնելով աշխատանքի պայմաններից), լույսը հանդցնելու դեպքում պարտավոր են ունենալ լույսի ինքնուրույն աղբյուրներ— այն է՝ նավթի ճրագներ, ելեկտրական ուժահամաքներ (ակկումուլյատոր), սակայն պահպանելով լույսի քողարկման կանոնները՝

ա) աշխատել լույսն ոգտագործել մինիմալ չափով— աշխատանք կատարելու համար·

բ) բոլոր լուսավորող կետերը պետք է պատրաստված լինեն հատուկ հարմարանքներով և արմատուրայով, վորպեսզի հնարավոր լինի մաքսիմալ չափով կրճատել լույսային կոնուսի չափերը, վորպեսզի լուսա-

վորվի միմիայն աշխատանքի վայրը, թույլ չտալ լույսի ճառագայթները տարածվելուն և լույսի աղբյուրի յերևալուն վերևից կողքից: Ամեն կերպ պետք է աշխատել լույսն ոգտագործել ծայր աստիճան անհրաժեշտության դեպքում և ծայր աստիճան մինիմալ չափով:

25. Պատուհանների և այլ ծածկումների համար լույս չթափանցող կտորներից պատրաստված վարագույները, վորպես կանոն ոգտագործվում են ինչպես քողարկման միջոցներ լուսային վոչ մեծ անցքերի համար, նույնպես և այն դեպքերում, յեթե լույսի խարվարման նպատակով կիրառվող մյուս միջոցները չեն ապահովում լույսի քողարկումը կամ թույլ չեն տալիս շարունակել աշխատանքը (պատասխանատու աշխատանք-լաբորատորիաներում նուրբ կամ ստույգ դրծիքների վրա և այլն):

3-ՐԴ ՀԱՏՎԱԾ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

26. Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի միջոցառումների անցկացման համար ՀՈՊ-ի պետը (դիրեկտորը) ոգտագործում է վոչ վարչատնտեսական և մանկավարժական կազմին, ինչպես նախապատրաստման շրջանում, նույնպես և ոդային հարձակումների ժամանակ:

27. Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետի ոգնականները հանդիսանում են՝

ա) Տնտեսվարը (կամ պարեսը)— տնտեսական միջոցառումների դծով և միաժամանակ հանդիսանում է ուսումնական հաստատության ՀՈՊ-ի շտաբի պետ.

բ) ուսումնական մասի վարիչը—ուսումնական միջոցառումների դծով.

գ) զին. ղեկը (վորտեղ կա) խմբերի, կամանդանների պատրաստման դծով.

Ծանոթություն.— ՀՈՊ-ի պետի ոգնականների նշանակումը կատարվում է ըստ տեղի պայմանների— յելներով ուսումնական հաստատության ՀՈՊ-ի միջոցառումների ծավալից, հաստիքում համապատասխան պաշտոնի անձանց առկայությունից:

28. Քիմիայի դասատուներին և Ֆիզ. կուլտ ղեկավարներին նույնպես մասնակից է արվում ՀՈՊ-ի կամանդաների կազմակերպման և պատրաստման գործին:

Քիմիայի դասատուները մասնակցում են քիմիական ստորաբաժանումների պատրաստմանը:

Ֆիզկուլտ ղեկավարները մասնակցում են մնացած ստորաբաժանումների պատրաստմանը:

29. Ոդային հարձակման ժամանակ մանկավարժական կազմը՝

ա) տարրական դպրոցներում— մնում է յերեխաների մոտ, ապահովելով նրանց պաշտպանումը համաձայն դպրոցի ՀՈՊ-ի պլանի.

բ) միջնակարգ դպրոցի բարձր դասարանների մանկավարժական կազմին մասնակից է արվում ՀՈՊ-ի միջոցառումների կիրառմանը համաձայն ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պլանի.

գ) տեխնիկումների և բանֆակների մանկավարժական կազմը մասնակցում է ուսանողության հետ միասին ՀՈՊ-ի կամանդաների աշխատանքներին, ղեկավարելով կամանդայի ջոկերը, ուսումնական հաստատության և թաղամասի ՀՈՊ-ի պլանների համաձայն:

դ) ՐՏՈՒՀ-ների և ԲՈՒՀ-երի մանկավարժական կազմը, ըստ իրենց մասնագիտության, մասնակցում և ՀՈՊ-ի առանձին միջոցառումների կիրառմանը և ՀՈՊ-ի կամանդայի աշխատանքներին համաձայն ուսումնական հաստատության և թաղամասի ՀՈՊ-ի պլանների:

Բ. ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

30. Ուսումնական հաստատության վողջ վարչատնտեսական և մանկավարժական կազմը պետք է ստանա ՀՈՊ-ի համապատասխան պատրաստականություն: Այդ արվում է առանց արտադրությունից կտրվելու ի հաշիվ ժողովրդական լուսավորության որդանների միջոցների և իրականացվում է ՊԱՀԸ-Ավիոքիմի որդանների հետ միատեղ:

31. Պատրաստականության բնույթը և չափը մոտավորապես պետք է լինի հետևյալը՝

ա) ուսումնական հաստատության դիրեկտորներն անցնում են ՀՈՊ-ի միջոցառումների և սիստեմի հատուկ կուրսեր.

բ) տնտեսվարները (պարեհները) անցնում են ուսուցման կուրս հետևյալ թեքումներով՝ հակահրդեհային և հակաքիմիական պաշտպանության, ապաստարանների կազմակերպման կարգի պահպանումը, կապի և քողարկման կազմակերպումը.

գ) զինղեկները և ֆիզկուլտ ղեկավարները պարտավոր են հանձնել ՀՈՔՊ-ի հրահանգչի քննություն.

դ) բոլոր մանկավարժները հանձնում են ՀՈՔՊ-ի և ՊԱՍՊ-ի նորմաները:

4-ՐԴ ՀԱՏՎԱԾ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ (ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՀՈՊ-Ի ՊԱՑՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

32. Բոլոր ուսումնական հաստատություններում հատուկ քային սպասարկող կազմից և յուրաքանչյուր հերթի ուսանողներից, սկսած 16-17 տարեկան հասակից, կազմակերպվում է ՀՈՊ-ի կամանդաներ և խմբեր, ուսումնական հաստատության պաշտպանության համար: Այդ կամանդաները և խմբերը համալրվում են ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետի (դիրեկտորի) կողմից նրանցով, ովքեր ձեռք են բերել համապատասխան պատրաստականություն և հանձնել են ՀՈՔՊ-ի և ՊԱՍՊ-ի նորմաները:

33. ՀՈՊ-ի խմբերը (կամանդաները) բաղկացած են լինում մոտավորապես հետևյալ մասնագիտական ջոկերից՝ կապի, քիմիական, հրդեհային, բժշկասանիտարական, կարգի պահպանման և լույսի քողարկման:

34. ՀՈՊ-ի խմբերի (կամանդաների) պետերը նշանակվում են ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետի (դիրեկտորի) կողմից, ՊԱՀԸ-Ավիոքիմի ակտիվից և բոլոր դեպքերում՝ յենթարկվում են ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետին:

35. Քաղխորհուրդների վորոշմամբ (ըստ թաղամասի ՀՈՊ-ի պետի առաջարկության) կարող է տեխնիկումների, բանֆակների, ԲՈՒՀ-երի և ԲՏՈՒՀ-ների մոտ դրվեն հատուկ կամանդաների, ջոկատների կազմակերպման պարտականություններ, յերնեքով նրանց մասնագիտության բնույթից և հանրակացարանների պայմաններից:

ՀՈՊ-ի այդ հատուկ—հրաձգային, քիմիական, հակահրդեհային, բժշկասանիտարական, սակրավոր, ատնասնաբուժական կամանդաները (ջոկատները) հանդիսանում են թաղամասի ՀՈՊ-ի պահեստը:

36. Թաղամասի ՀՈՊ-ի կամանդաների (ջոկատների) անձնական կազմի զինապարտներից մինչ զինակոչային հասակը և յերկրորդ հերթի պահեստում գտնվողները դրանցվում են զին. հաշվառման որդանների կողմից:

ՀՈՊ-ի թաղամասային կամանդաները (ջոկատները) յենթարկվում են թաղամասի ՀՈՊ-ի պետին:

37. Թաղամասային ՀՈՊ-ի կամանդաների (ջոկատների) պետերը նշանակվում են թաղամասի ՀՈՊ-ի պետի կողմից պերսոնալ կարգով այդ նպատակի համար զին. հաշվառման որդանների կողմից դրանցված զինա-

կոչի յերկրորդ հերթի պահեստի հրամկազմից, վորոնք ապրում են ՀՈՊ-ի համապատասխան թաղամասում:

38. ՀՈՊ-ի կամանդաների խմբերի ջոկատների անձնական կազմի ընտրության ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել կոմյերիտական կորիզի ուժեղացման վրա: Ցուրաքանչյուր թեկնածուն պետք է մանրակրկիտ կերպով ստուգվի տեղական կուսակցական, կոմյերիտական, պրոֆ. և հասարակական կազմակերպությունների կողմից:

39. Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի խմբերի, կամանդաների, ջոկատների հագեցումը, ինչպես անհատական պաշտպանության միջոցներով, նույնպես և մասնագիտական զույգով կատարվում է ի հաշիվ ուսումնական հաստատության, համաձայն գոյություն ունեցող նորմաների և ադյուսակների:

40. ՀՈՊ-ի խմբերում, կամանդաներում, ջոկատներում գործածության մեջ գտնվող զույգի պահպանման պատասխանատվությունը դրվում է ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետի վրա, վորն անձամբ կամ իրեն կողմից լիազորված պաշտոնական անձանց միջոցով (տնտեսվար, պարետ) հաշիվ է տանում և ամսական առնվազն մեկ անգամ կատարում է զույգի ստուգում, ձեռք առնելով անհրաժեշտ միջոցները հայտնաբերված թերությունները վերացնելու համար— զույգի մարտական պատրաստականությունը պահպանելու նպատակով:

Բ. ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

41. Հասարակական կազմակերպությունների գծով ուսանողության (աշակերտության) պատրաստումը կատարվում է հետևյալ կարգով.

ա) տարրական, վոչ լրիվ միջն. և միջնակարգ դպրոցների 10—16 տարեկան աշակերտները հանձնում են ՊԱՊ-ի 1-ին աստիճանի ՀՈՔՊ-ի և ՊԱՍՊ-ի նորմաները.

բ) միջնակարգ դպրոցի բարձր դասարանների (9 և 10-րդ դասարանների) տեխնիկումների և բանֆակների

ուսանողները հանձնում են ՊԱՊ-ի առաջին և յերկրորդ աստիճանի, ՊԱՍՊ-ի, ՀՈՔՊ-ի նորմաները.

գ) ԲՈՒՀ-երի և ԲՏՈՒՀ-ների ուսանողները հանձնում են ՊԱՊ-ի առաջին և յերկրորդ աստիճանի ՀՈՔՊ-ի, ՊԱՍՊ-ի նորմաները և տալիս են ՀՈՔՊ-ի հրահանգչի քննություն:

42. Ընդհանուր ուսումնական գծով ուսումնական հաստատության պլաններում և ծրագրերում պետք է նախատեսվեն ՀՈՊ-ի խնդիրները, ինչպես համապատասխան առարկաներ անցնելիս (բնագիտություն, կենդանաբանություն, քիմիա) նույնպես և հատուկ կուրսերում ռազմական պատրաստականության գծով: Վորպես ձեռնարկներ բացի համապատասխան դրականությունից պետք է ոգտագործել նաև ՀՈՔՊ-ին վերաբերող վարժական կինոֆիլմաներ, եքսկուրսիաներ, առանձին թանգարաններ, քիմիական պաշտպանության տները և այլն:

Ծանոթություն.— Վարժական բնույթ կրող, ՀՈՊ-ի միջոցառումները պետք է կիրառել ԲՈԼՈՐ ուսումնական հաստատությունների կողմից, անկախ սպառնացվող գոտում գտնվելուց:

5-ՐԴ ՀԱՏՎԱԾ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՈՊԻ ՊԵՏԻ (ԴԻՐԵԿՏՈՐԻ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՅԵՎ ՈԴԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

43. Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետը վորոշում է ՀՈՊ-ի միջոցառումների ծավալը և կազմում է նրա պլանը, վորը պետք է լինի կարճ, սակայն կոնկրետ: Այդ պլանն ընդգրկում է մինչև ոդային տագնապի (ՈՏ) ազդանշանը, նախապատրաստմանը և վար-

չանտեսական, մանկավարժական կազմի ու ուսանողության (աշակերտների) գործունեություններին վերաբերող տվյալներն ողջային հարձակման ժամանակ (տես № 1-ին հավելվածը)։ Պլանը հաստատվում է ժողովրդական լուսավորության համապատասխան որդանների կողմից համաձայնեցնելով պունկտի, շրջանի, թաղամասի ՀՈՊ-ի պետի հետ (յելնելով ուսումնական հաստատության կարևորությունից և ՀՈՊ-ի ձեռնարկած միջոցառումների ծավալից)։

Ծանոթություն.— Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պլանը կազմվում է յելնելով նրա տիպից և տեղական պայմաններից։ Այսպես օրինակ տարրական դպրոցի պաշտպանումը ապահովում է տան (ժակտի) ՀՈՊ-ի կամանդան, վորի մեջ նա տեղավորված է կամ ապահովվում է թաղամասային ՀՈՊ-ի պլանով։

44. Նախապատրաստման շրջանում, ինչպես ասված է վերևում, ՀՈՊ-ի պետն անձամբ ղեկավարում է ուսումնական հաստատության ՀՈՊ-ին նախապատրաստվելը և նախահաշվում ի նկատի ունենում անհրաժեշտ քանակությամբ միջոցներ, ինչպես ՀՈՊ-ի անմիջական պաշտպանողական միջոցառումների, նույնպես և վարժական բնույթ կրող միջոցառումները կիրառելու համար։

45. Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետը պարբերաբար կազմակերպում է իրեն գլխավորած հաստատությունը ՀՈՊ-ին նախապատրաստելու նպատակով, փորձնական ուսուցումներ։

46. Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետը (դիրեկտորը) իրեն գլխավորած հաստատության ՀՈՊ-ին պատրաստ լինելու մասին սիստեմատիկորեն հաշվետվություն է տալիս համապատասխան ժողովրդական լուսավորության որդաններին, իսկ հարկ յեղած դեպքում (ըստ պահանջի) նաև շրջանի, թաղամասի ՀՈՊ-ի պետին տեղեկություններ է հաղորդում պատրաստ լինելու մասին։

Բ. ՈՂԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

47. Ըստ «ՈՏ» ազդանշանի ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետը՝

ա) անմիջապես ներկայանում է ուսումնական հաստատության ՀՈՊ-ի շտաբը և կանչում է իր ոգնականներին, տեղեկություններ և ցուցմունքներ տալու համար.

բ) անտեսական միջոցառումների մասի ոգնականների միջոցով ստուգում է լույսի քողարկման և հակաքիմիական պաշտպանության միջոցառումների դրությունը, այն է՝ լույսի հանգցնելը, հերթապահ լուսավորության լինելը, պատուհանների փեղկերի, դռների, ոդհանիչների (վենտիլյատորների) անցքերը և ծխնելույզների փակելը, ուսանողների (աշակերտների) և մանկավարժական կազմի հակագազեր ունենալը, ապաստարանների և պաշտպանող սենյակների (դասարանների) պատրաստ լինելը, հակաոդային պաշտպանության դույլի դրությունը և այլն։

գ) ուսումնական մասի ոգնականի միջոցով ապահովվում է ուսանողության (աշակերտության) մեջ կարգ ու կանոնի և հանգստության պահպանումը, փոխադրելով նրանց պաշտպանող սենյակները կամ ապաստարանները, ապահովելով ուսանողների (աշակերտության) մեջ քաղմասսայական աշխատանքները։

Ծանոթություն.— Ուսանողներին (աշակերտներին) ծնողների մոտ գնալ թույլ է տրվում, յեթե ծնողները պահանջեն, սակայն միմիայն այն դեպքում, յեթե նրա մոտ կա հակագազ և մինչև «Բ.Տ.» ազդանշանը։

դ) խմբակներ և կամանդաներ պատրաստող ոգնականի միջոցով հավաքում է նրանց անձնական կազմը, բաց է թողնում նրանց մասնագիտական դույլ և դասավորում է վաղորոք նշված տեղերում (պահակակետերում).

յե) ուսումնական հաստատության մեջ լվացող (վոդողող) սարքավորում լինելու դեպքում կարգադրու-

29417-59

թյուն է անում նրա վառելու, անհրաժեշտ միջոցներով ապահովելու մասին, վորպեսզի վնասվածներին լվացվի (վողոդվի)։

զ) բժշկական կաբինետ լինելու դեպքում ստուգում է նրա կողմից բժշկական ոգնություն ցույց տալու համար պատրաստ լինելը։

է) անասուններ լինելու դեպքում (գյուղատնտեսական ուսումնական հաստատություններում) համապատասխան անձանց միջոցով ստուգում է անասունների պահպանման և անասնաբուժական ոգնության միջոցառումների պատրաստ լինելը։

ը) անձամբ ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պլանով նախատեսված վորոշ ժամանակից հետո, ստուգում է ՀՈՊ-ի բոլոր միջոցառումների պատրաստ լինելը, հատկապես կարևոր բնագավառներում (լույսի քողարկումը, հակաքիմիական և հակահրդեհային պաշտպանությունը, պահակակետերի դասավորումը, ՀՈՊ-ի կամանդաների և խմբերի պահակակետ ներկայանալը, նրանց քաղաքական դրությունը, հագեցումը, առանձնապես կարևոր շենքերի պահպանումը և այլն)։

թ) ձեռք առած միջոցառումների և ուսումնական հաստատության պատրաստ լինելու մասին տեղեկություն է տալիս ժողովրդական լուսավորության համապատասխան որգաններին։

48։ «ԲՏ» աղդանշանի դեպքում ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետը՝

ա) հաղնում է հակագազ և ինքն անձամբ կամ համապատասխան ոգնականների միջոցով ստուգում է հակագազերի հագնելը, ովքեր ունեն և պետք է ունենան ըստ իրենց պարտականությունների բնույթի։

բ) ստուգում է պաշտպանող սենյակների, ապաստարանների փակ լինելը։

գ) ընդունում է պահակակետերի տեղեկագրերը, շենքերի դրության մասին (կամ նրանց վնասվածքների բնույթի մասին) և ձեռք է առնում հետագա միջոցները

հակաքիմիական և հակաոդային պաշտպանության համար, յելնելով ստեղծված պարագայից։

49։ «Ավարտանշան» (ատրոյ) աղդանշանից հետո ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետը՝

ա) անձամբ կամ իր ոգնականների միջոցով ղեկավարում է ոդային հարձակման հետևանքները լիկվիդացիայի յենթարկելու աշխատանքները։

բ) տեղեկություն է տալիս ժողովրդական լուսավորության համապատասխան որգաններին ՀՈՊ-ի համար ձեռք առած միջոցների և ոդային հարձակման հետևանքները լիկվիդացիայի յենթարկելու աշխատանքների ընթացքի մասին, յեթե այդ յեղել է ուսումնական հաստատության նկատմամբ։

գ) միջոցներ է ձեռք առնում ուսումնական հաստատության նորմալ կյանքն ապահովելու և կրկնակի հարձակման դեպքում պատրաստ լինելու համար։

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է» ՀԱՎԵԼՎԱԾ №-1

. . . . . .

. . . . .

ՊԼԱՆ (տիպային)

. . . . . Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի

. . . . . քաղաքի . . . . . ռայոնի

1. . . . . Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետը հանդիսանում է ընկ. . . . . (դիրեկտորի), նրա տեղակալը ընկ. . . . . (դիրեկտորի տեղակալ կամ ուսմասվար) . . . .

Ուսումնական հաստատության ՀՈՊ-ի պետի տեղակալները տնտեսական միջոցառումների գծով հանդիսանում են ընկ. ընկ. . . . . (տնտեսվար, պարետ)։

Ուսումնական աշխատանքների գծով ընկ. . . . . (ուսմասվար)։

(դիրեկտոր), նրա տեղակալը ընկ. . . . . (զին. դեկ. կամ ֆիզկուլտ. դեկավարը):

2. ՀՈՊ-ի շտաբի պետը հանդիսանում է ընկ. . . . . ոդային հարձակման ժամանակ շտաբը տեղավորվում է առաջին հարկում № 2-րդ սենյակում, հեռախոս № 107:

3. Ուսումնական հաստատությունն ապահովվում է ՀՈՊ-ի կամանդայով, կազմով . . . հոգի. ՀՈՊ-ի կամանդայի հավաքատեղը վարչատնտեսական կազմից և բարձր դասարանների ուսանողներից շենքի օրահում, գույքը տրվում է № 3 պահեստից (հավաքատեղի մոտ):

4. ՀՈՊ-ի կամանդան կազմված է հետևյալ ջոկերից՝

ա) քիմիական . . . հոգի հրամատարը ընկ. . . . . .

բ) հակահրդեհային . . . . հոգի հրամատար ընկ. . . . . .

գ) կարգ պահպանող . . . . հոգի հրամատար ընկ. . . . . .

դ) բժշկա-սանիտարական . . . հոգի հրամատար ընկ. . . . . .

ե) անասնաբուժական . . . . հոգի հրամատար ընկ. . . . . .

5. Կարգ պահպանող և հակահրդեհային ջոկերը նշանակում են պահակակետեր հետևյալ տեղերում՝

Պահակակետ № 1-ին— կարգ պահպանող-շենքի մուտքի մոտ:

Պահակակետ № 2— կարգ պահպանող շենքի յերքի մոտ:

Պահակակետ №3— կարգ պահպանող շենքի գլխավոր սանդուխքի վանդակի մոտ:

Պահակակետ № 4—կարգ պահպանող շենքի յերրորդ հարկում մուտքի մոտ:

Պահակակետ № 1 հրդեհային պաշտպանություն— ձեղնահարկի (չարդախի) մոտ:

Պահակակետ № 2 հրդեհային պաշտպանություն— նոր կառուցվող շենքի բակում:

Պահակակետ № 3 հրդեհային պաշտպանություն— լաբորատորիայի մոտ:

Ծանոթություն.— Պահակների գործողության կարգը վորոշվում է առանձին հրահանգով.

6. Համաձայն քաղխորհրդի վորոշման ընկ. ընկ. . . . . .

. . . . . վորոնք մտնում են ՀՈՊ-ի թաղամասային կամանդայի մեջ «ՈՏ» ազդանշանով ներկայանում են այդ կամանդայի հավաքատեղը:

Հասցեն . . . . . .

7. Դասարանների գործողությունը տագնապի ժամանակ.

ա) №№ . . . . (կրասեր) դասարանները, դասատու ընկ. . . . . դեկավարությամբ փոխադրվում են ապաստարանը, վորը գտնվում է . . . . . .

բ) №№ . . . (ավագ) դասարանները, դասատու ընկ. . . . . դեկավարությամբ, փոխադրվում են №№ . . . . պաշտպանող սենյակները.

գ) տուն բաց թողնվողները, դասղեկ ընկ. . . . . դեկավարությամբ, հավաքվում են № . . . . յելքի մոտ:

Ծանոթություն.— 7-րդ կետը ձևակերպվում է ըստ տեղական պայմանների (ապաստարան լինելը, պաշտպանողական սենյակների քանակը, հակագազային դիմակներով ապահովված լինելը ի նկատի ունենալով):

Ուսանողության վերախմբավորման և նրանց ուրիշ շենք փոխադրելու համար տրվում է 5—10 որպե ժամանակ:

8. Քիմ-ապաստարանի պետ նշանակվում է ընկ. . . . . պաշտպանող սենյակների դիտողներ նշանակվում են ընկ. ընկ. . . . . .

9. Լույսի քողարկման պատասխանատու նշանակվում է ընկ. . . . . շենքերի նկատմամբ հատուկ հակաքիմիական միջոցների համար պատասխանատու նշանակվում է ընկ. . . . . .

10. Աշղանշանային կետը ընկ. ընկ. . . . . կազմով տեղավորվում և բակ № . . . . . աշղանշաններ տրվում են.

ա) «ողային տագնապ» (ՈՏ) ընդհանուր աշղանշանի ուժեղացումը սուլելով 5 րոպե.

բ) «քիմիական տագնապ» (ՔՏ) զանգի հաճախակի հարվածներ 5 րոպե.

գ) «ավարտանշան» (ատբոյ) պլոներական թմբուկի հաճախակի հարվածներ:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

. . . . . ուսումնական հաստատության

ՀՈՊ-ի ՊԵՏ՝

« » . . . . . 193 թ. քաղաք . . . .

Պլանին կցվում է

1. Հրահանգ լույսի քողարկման մասին:

2. Հրահանգ շենքի հակաքիմիական պաշտպանության մասին:

3. Հրահանգ ապաստարանների ոգտագործման մասին:

4. Կանոններ վարքի մասին ողային հարձակման ժամանակ:

ՀԱՎԵԼՎԱԾ № 2

ՀՈՒՇԱՏԵՏՐ ՀՈՊ-Ի ՄԱՍԻՆ.

ՀՈՊ-ի խմբերում (կամանդաներում) մասնակցող դպրոցականի համար:

1. Հիշիր, վոր ժամանակակից պատերազմը կարող է սկսվել հակառակորդի ավիացիայի հանկարծակի հարձակումով, ամեն տեղ և միշտ (դպրոցում, ուսումնական հաստատության մեջ, ընտանիքում):

Սովորիր ինքդ և սովորեցրու ուրիշներին, թե ինչ պետք է անել ՀՈՊ-ին հաջող մասնակցություն ունենալու համար:

2. Մի մոռացիր, վոր ողային հակառակորդը կարող է գործադրել քիմիական նյութեր, վորոնք կարող են թունավորել:

Պաչը-Ավիոքիմի բչիջի միջոցով ձեռք բեր քեզ և ընտանիքիդ անդամների համար հակագազեր: Սովորիր ինքդ և սովորեցրու ուրիշներին ոգտվել հակագազից:

3. Հիշիր, վոր ողային հակառակորդը կարող է գործադրել հրդեհ առաջացնող ռումբեր, սովորիր ինքդ և սովորեցրու ուրիշներին, թե ինչպես հանգցնել առաջացած հրդեհը ձեռքիդ տակ յեղած միջոցներով:

4. Սովորիր ինքդ և սովորեցրու ուրիշներին, ցույց տալու առաջին ոգնություն վիրավորվածներին, այրվածք ստացողներին և թունավորվածներին:

Ձեռք բեր քեզ և ընտանիքիդ համար անհատական վիրակապության փաթեթ և կարողացիր ոգտվել նրանից:

5. Հանձնիր ՊԱՍՊ-ի, ՀՈՔՊ-ի և ՊԱՊ-ի նորմանները ու ակտիվ մասնակցիր քո հիմնարկության ՀՈՊ-ի խմբերի (կամանդաների) աշխատանքներին:

6. Կարդա ՀՈՊ-ի վերաբերյալ գրականություն, ծանոթացիր ցուցահանդեսների, կինո-ֆիլմերի, թանգարանների հետ, վորոնք վերաբերվում են ՀՈՊ-ին:

ՎՏԱՆԳԻ ՄՈՏԵՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆՈՐԻՑ ՍՏՈՒԳԻՐ ՔՈ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼԸ ՀՈՊ-ԻՆ

7. Եթե դու նշանակված ես ՀՈՊ-ի խմբի (կամանդայի) մարտիկ, հիշիր, վոր դու յուրաքանչյուր րոպե պետք է պատրաստ լինես հավաքին ըստ տագնապի:

8. Հիշիր, ուր վոր գնաս, վորտեղել գտնվես, հակագազը, վիրակապության անհատական փաթեթը պետք է քեզ հետ լինի. ինքդ հետևիր դրան և հիշեցրու ուրիշներին:

9. Մի թողնիր սեղանի վրա սննդամթերքը, հացը, ջուրը և այլն:

Ուտելուց հետո պահիր պահարանում:

10. Գիտցիր, հիշիր և հայտնիր ուրիշներին, թե վորտեղ ե գտնվում մոտակա բուժ. ոգնության կայանը և լվացող (վողողող) կայանը:

11. Վորպեսզի չուտ տեղեկություն ստանաս հակառակորդի հանկարծակի հարձակման մասին, տանը բարձրախոսը միացրված պահի:

ՀՍՏԱԿ ՑԵՎ ԱՐԱԳ ԿԱՏԱՐԻՐ ՔՈ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՑՈՒՆՆԵՐԸ ՈՌՍՑԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

12. Հիշիր, վոր «Ողային տագնապ» ազդանշանը տրվում ե շոգեմեքենայի, գործարանների շչակների ընդհատվող ձայնով, ռադիոյի և առանձին շչակների (սիրենաի) միջոցով:

13. Հիշիր, թե ինչ պետք ե անես այդ ազդանշանով, յեթե գտնվում ես տանը:

Պահպանիր հանգստություն և համբերություն:

Ժամանակին ներկայացիր ՀՈՊ-ի խմբի (կամանդայի) հավաքատեղին, վորի մեջ յեթե դու կաս:

Ցեթե դու մնում ես տանը՝

Ոգնիր վորպեսզի վառարանների և պլիտաների վառելը դադարեցվի, հանգցրու արագավառոցը (պրիմուսը):

Փակիր պատուհանները, դռները, ողանցքները, լողմաքրիչները (վենտիլյատորները), ծխնելույզները:

Ունեցիր խմելու ջուր:

Քո հակագազը պահիր «պատրաստ» դրության և հետևիր, վորպեսզի ուրիշները ևս նույնն անեն:

Գիշեր ժամանակ անմիջապես հանգցրու լույսը, մթնեցրու բնակարանը:

Կատարիր տան ՀՈՊ-ի պետի բոլոր կարգադրությունները:

14. Հիշիր, թե ինչ պետք ե անես, յեթե ազդանշանի ժամանակ գտնվում ես ուսումնական հաստատության մեջ՝

Պահպանիր հաստատված կարգը, և կարգապահությունը և անշեղորեն կատարիր դիրեկտորի, նրա ոգնականների և դասղեկների կարգադրությունները:

Մի աշխատիր վորպեսզի անպայման տուն գնաս:

Քո հակագազը պահիր «պատրաստ» դրության:

Ցեթե դու կաս ՀՈՊ-ի կամանդայի կամ խմբի մեջ, անմիջապես ներկայացիր հավաքակետը, ստացիր քո դույքը և գրավիր տեղդ:

Հստակ և արագ կատարիր հետագայում քո պարտականությունները, վորպես ՀՈՊ-ի մարտիկ:

15. Ցեթե ազդանշանի ժամանակ գտնվում ես փողոցում՝

Մտիր մոտակա տունը և սպասիր վորևե տեղ, սանդուխքների մոտ, կամարի տակ կամ հատուկ նշանակված տեղում շենքի մեջ, վորը քեզ ցույց կտան այդտեղ:

16. Ցեթե ազդանշանի ժամանակ գտնում ես թատրոնում, կինոյում, այգում կամ ուրիշ հասարակական վայրում— պահպանիր հանգստություն, խուճապ և սեղմվածություն մի առաջացրու, մի աշխատիր, վորպեսզի անպայման դուրս դաս այդտեղից, կատարիր վարչության (ադմինիստրացիայի) կարգադրությունները:

17. Իմացիր, վոր այն տեղերում, վորտեղ յերևացել են թունավոր նյութեր, ազդանշան ե տրվում «քիմիական վտանգ» զանգի հարվածներով, ձեռքի շչակների ձայնով և այլն:

18. Հիշիր, թե ինչ պետք ե անես «ՔՏ» ազդանշանի դեպքում, վորտեղ ել վոր գտնվելու լինես՝

Անմիջապես հագիր հակագազը և չհանես մինչև, վոր այդ մասին չասվի:

Ցեթե ազդանշանի ժամանակ գտնվում ես փողոցում առանց հակագազի, մի վազիր, պահիր շնչառությունդ, ծածկիր քիթդ և բերանդ թաշկինակով, վերարկուիդ

փեչերով կամ թևերով և արագ մտիր մոտակա տունը, այնտեղ քեզ ցույց կտան, վորտեղ թաղնվել:

19. Եթե քեզ վրա թափել է (կամ քսվել) թունավորող նյութ, իմացիր, վոր պետք է անմիջապես լողանաս և հագնես մաքուր հագուստ. դնա վողողող (լվացող) կայանն ըստ քո ուսումնական հաստատության կամ միլիցիոների ցուցմունքի, յեթե այդ ժամանակ դու գտնվում ես փողոցում:

20. Մոտիկ մի գնա և մի անցիր այն տեղերից, վորտեղ դրված են դեղին սլաքներ «վարակված է» մակագրությամբ կամ պարզված են դեղին դրոշակներ պարանների վրա— այդ տեղերը վարակված են թունավորող նյութերով և դու կարող ես թունավորվել. հարցրու գունապահին կամ միլիցիոներին— պահակակետի տեղը, նրանք քեզ ցույց կտան ինչպես անցնել և ուր գնալ:

Պետհրատի տպարան, Երևան

Գլավլիտ 2014, Պատվեր 138. Տիրաժ 2000

«Ազգային գրադարան»
NL0270859

13.350